

ԲՈՂՈՅԱՆ ԱՐԱՏ

Ս. ԳԻՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ԺԵ դարի 40-ական թթ. Յոհանես Գյուտենբերգի ջանքերով սկիզբ դրվեց տպագրության դարաշրջանի, որը հեղաշրջում առաջացրեց համաշխարհային մշակույթի գրեթե բոլոր բնագավառներում: Մանավանդ մեծ է եղել այդ գյուտի դերը Աստվածաշնչի բազմալեզու բնագրերի հրատարակության գործում, քանի որ տպագրական գործունեության առաջին իսկ տարիներին լույս աշխարհ եկան Աստվածաշնչի բազմալեզու, ճշգրիտ տարբերակները¹: Աստվածաշնչագիտությունը խթանաձև մարդկային գործունեության այս բնագավառն արդեն ԺՁ դարում փորձում էր իր հսկողության տակ առնել Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Գյուտենբերգի գյուտը կարճ ժամանակում ներդրվեց Արևմտյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում, իսկ 1512 թ. Հակոբ Մեղապարտը Վենետիկում հրատարակեց առաջին հայերեն գրքերը: Ինչպես գիտենք, այդ տարիներին Հայոց կաթողիկոսական աթոռը նոր էր հաստատվել Վաղարշապատում (1441 թ.), և երկար ժամանակ քաղաքական իրավիճակը՝ տարածաշրջանում չընդհատվող պատերազմները, եկեղեցական իշխանությունների անկայուն դրությունը խանգարում էին Մայր Աթոռի լիաշունչ մշակութային գործունեությանը:

Հաջորդ գործիչը, որը կարևոր դեր ունի հայոց տպագրության զարգացման գործում, եվրոպեցի Աբգար դպիր Թոխատեցին է, որը Միքայել Ա Սեբաստացի օգնական-կաթողիկոսի հատուկ նամակով

¹ Բազմալեզու (հունարեն, լատիներեն, եբրայերեն, ասորերեն, արաբերեն) Աստվածաշնչի առաջին հատորավոր հրատարակությունը լույս է տեսել 1569-1572 թթ. Ամստերդամում, փարիզյանը՝ 1629-1645 թթ., իսկ լոնդոնյանը՝ 1655-1657 թթ. տե՛ս Kaufhold H., Die Wissenschaft vom Christlichen Orient (Gedanken zur Geschichte und Zukunft des Faches). - Vom Euphrat an die Altmühl: Die Forschungsstelle Christlicher Orient an der Katholischen Universität Eichstätt-Ingolstadt / Herausgegeben von Peter Bruns und Heinz Otto Luthé, Wiesbaden, 2012, S. 47-48 [Eichstätter Beiträge zum Christlichen Orient, Bd. 1].

իբրև դեսպան 1562-1565 թթ. միջև ներկայանում է Հռոմի Պիոս Դ պապին (1559-1565 թթ.): Աբգար դպիրը 1566 թ. Վենետիկում բազմաթիվ գրքերի կողքին հրատարակում է նաև Սաղմոսարան՝ սկիզբ դնելով Սուրբգրային բնագրերի հրապարակմանը մեզանում: Սաղմոսարանի նշանակությունը Հայոց եկեղեցու կողմից կարևորվում էր հատկապես իբրև հոգևոր ընթերցանության և ծիսական գիրք: Այնուամենայնիվ այս շրջանում Մայր Աթոռում հետզհետե մտահոգության առարկա էր դառնում Աստվածաշնչի բազմաթիվ ձեռագրերում լավագույն բնագրի առանձնացումն ու հրապարակումը, Եկեղեցու կարիքների համար միասնական Աստվածաշնչային բնագրի հրատարակությունը: Նման գործունեությունը հետզհետե դժվարանում է նաև Եվրոպայում: Հռոմի պապության դեմ ապստամբած անգլիական, գերմանական, ֆրանսիական, հոլանդական նահանգները տպագրական գործը զենք էին դարձրել կաթոլիկ եկեղեցու դեմ պայքարում, այդ իսկ պատճառով ուժեղանում է պապական եկեղեցու վերահսկողությունը տպագրական գործի վրա՝ խոչընդոտելով յուրաքանչյուր կասկածելի, մանավանդ օտարալեզու, հատկապես Սուրբ Գրքի այլալեզու հրատարակությունների հրապարակվելը: Հայ տպագրիչները ստիպված էին ենթարկվել խաղի կանոններին, իսկ Հայոց եկեղեցին իր անհուն լավատեսությամբ սպասում էր նոր ժամանակների:

Մինչ այդ՝ ԺԷ դարի ընթացքում, հայերեն գրքերի հրատարակությունը Եվրոպայում գրեթե ամբողջովին կենտրոնանում է Հռոմի պապության Հավատի համասփյուռ քարոզչության (Propaganda de fidei) Ուրբանյան տպարանի ձեռքում: Հիշարժան է, որ Հռոմի պապության Հավատասփյուռ քարոզչության կենտրոնը փորձում էր իր ձեռքում կենտրոնացնել Քրիստոնյա Արևելքի գրեթե բոլոր ժողովուրդների հրատարակչական գործը, հատկապես Ս. Գրքի հրատարակությունը հունարեն, արաբերեն, ասորերեն և այլ լեզուներով², որին ձեռնամուխ էին լինում Քրիստոնյա Արևելքի՝ կաթոլիկություն ընդունած եկեղեցական կառույցները (Քաղղեական, մարոնի, մելկիտ ևն):

Հայկական գաղութների մեջ Լամբերգը (Լվով) և Նոր Զուլան

² Այդ մասին տե՛ս հ. Սահակ Ճեմճեմեան, Հայ տպագրությունը եւ Հռոմը (ԺԷ դար), Վենետիկ, 1989, էջ 9-12:

հետևողականորեն փորձում էին սատար կանգնել Հայոց եկեղեցու գրահրատարակչական գործին՝ հաղթահարելով կաթոլիկ եկեղեցու հարուցած դժվարությունները: Հիշատակության արժանի են բաղիշեցի Հովհաննես քահանա Քարմատանենցի ջանքերը, որը 1615-1618 թթ. Լվովում հրատարակում է հայերեն Սաղմոսարան և հայատառ-ղփչադերեն «Աղօթք հասարակաց»-ը³: Պետք է նկատի ունենալ, որ այս ժամանակ սլավոնական գրքի տպագրությունը դեռևս իր առաջին քայլերն էր անում Ռուսաստանում և մյուս պրովոսլավ երկրներում:

ԺԷ դարում Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հրատարակչական գործի զարգացումը վստահում է Նոր Ջուղայի հարուստ գաղութին: Տպագրության ասպարեզում Լվովի գաղութի բռնած ճանապարհն էր ընտրել նաև Խաչատուր Կեսարացին, որը, տեսնելով Եվրոպայում տպագրական գործիքներ հայթայթելու և տառերի ձուլման հետ կապված դժվարությունները, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մի խումբ նվիրյալ հոգևորականների աջակցությամբ ինքնուրույնաբար տառեր ստեղծեց (ձուլեց) Սպահանում և ձեռնամուխ եղավ Հայոց եկեղեցու սպասավորների համար այնքան ըղձալի եկեղեցածիսական գրքերի հրատարակությանը (Սաղմոսարան, 1638 թ., Խորհրդատետր՝ 1641 թ., Հարանց վարք, 1641 թ., Ժամագիրք, 1642 թ. ևն): Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարիքների համար այստեղ հիմնված տպարանը Մերձավոր Արևելքում առաջիններից մեկն էր: Միաժամանակ Խաչատուր Կեսարացու աջակերտ Հովհաննես Ջուղայեցի վարդապետը, Եվրոպայում հետազոտելով տպագրական գործը, իր առաջին գրքերն է հրատարակում Վենետիկում (Ներսես Շնորհալի, Յիսուս Որդի, 1643 թ.), Լիվոռնոյում (Սաղմոսարան, 1644 թ.) և վերադառնալով Նոր Ջուղա՝ տպագրում է Պարզատումար (1647 թ.): Նրան է վերագրվում նաև ամբողջական Աստվածաշնչի հրատարակման առաջին փորձը (1650 թ.), որը, ցավոք, չհասավ իր ավարտին⁴: Օրվա խնդիր էր

³ Նույն տեղում, էջ 339-348: Վկայություններ կան նաև հայերեն բժշկարանի տպագրության մասին, որը ցավոք չի պահպանվել, տե՛ս Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Խավայան Ա., Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 16-17:

⁴ Այդ մասին տե՛ս Ոսկանյան Ն., Կորկոտյան Ք., Սավայան Ա., Հայ գիրքը

դառնում հայերեն Աստվածաշնչի հրատարակությունը, որն առանց հիմնավոր նախապատրաստության հնարավոր չէր իրականացնել: Նման աշխատանքներ ժԷ դ. տարվում էին Հռոմում, Նոր Զուղայում և Վաղարշապատում⁵: Աստուածաշնչի լիակատար հրատարակության պատիվը վերապահված էր Էջմիածնի Մայր Աթոռին:

Հռոմում այդ աշխատանքները փորձում էր համակարգել Հավատքի համասփյուռ քարոզչության կենտրոնն իր ներկայացուցիչ Պողոս Պիրոմալլիի միջոցով⁶: Հայոց տպագրության պատմության հաջորդ փուլում Ալ. Երիցյանը բարձր է գնահատում Ամենայն Հայոց կաթողիկոսների դերը հայկական տպագրության պատմության մեջ⁷: Առաջին մեծ հաջողությանն այս բնագավառում կարողացավ հասնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսարանի նախկին դիվանապետ, հետագայում Մուղնու Ս. Սարգիս վանքի վանահայր, նորջուղայեցի Ոսկան եպսկ. Երևանցին, որը 1666/68 թթ. Ամստերդամում լույս ընծայեց առաջին հայերեն Աստվածաշունչը⁸: Պատահական չէր հրատարակության համար ընտրված վայրը, քանի որ Հոլանդիայում գործող հայկական տպարանը համեմատաբար ազատ էր Հռոմի պապության հարուցած դավանաբանական-գրաքննական հետապնդումներից, թեպետ այս տպագրությունը պատրաստելու համար հրատարակիչը, ուղղորդվելով Պողոս Պիրոմալլու խորհուրդներով, խմբագրել էր Աստվածաշունչը լատին Վուլգատայի հետևողությամբ, մանավանդ վերախմբագրելով Նոր Կտակարանի հայկական բնագիրը: Տպավորիչ էր հատորի խորագիրը. «Աստուածաշունչ Հնոց եւ Նորոց Կտակարանաց ներ պարունակող, շարակարգութեամբ նախնեացն մերոց եւ ճմարտասիրաց թարգմանչաց»: Հայագետ Ս. Քոլանջյանը,

1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 32, Անասեան Յ., Մանր երկեր, էջ 41:

⁵ Անասյան Հ., Աստուածաշունչ մատենի հայկական բնագիրը. նույնի՝ Մանր երկեր / ներած. Ա.Գ. Սանճեանի, Լոս Անջելես, 1987, էջ 23-25: Իշխանյան Ռ., նշվ. աշխ., էջ 375-377:

⁶ Անասեան Յ., նշվ. աշխ., էջ 24, 25:

⁷ Ա. եպս. Սմբատյանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, Էջմիածին, 1973, էջ 19:

⁸ Տե՛ս Էջմիածին, 1966, ԺԱ-ԺԲ, էջ 71-175:

փորձելով գտնել Ոսկան Երևանցու հրատարակած Աստվածաշնչի բնագրի համար հիմք հանդիսացած հայերեն ձեռագրերը, եկել է այն համոզման, որ թե՛ Հեթում Բ արքայի (ՄՄ-180) և թե՛ Ղազար Բաբերդացու (ՄՄ-201) ընթրփնակած Ս. Գրքի ձեռագրերը հայտնի են եղել հրատարակչին: Դրանցից առաջինի վրա պահպանվել են Ոսկան Երևանցու բազմաթիվ նշումները: Այնուամենայնիվ, լատին Կուլգատային հետևող Ամստերդամյան Աստվածաշնչի խմբագրական հավելումների մեծ մասը վերագրվում են Ոսկան Երևանցուն⁹: Ուղղակիորեն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից խրախուսվող ձեռնարկ կարելի է համարել Հակոբ Դ Ջուղայեցի (1655-1680 թթ.) կաթողիկոսի հովանու ներքո Ամստերդամի «Սրբոյն Աթոռոյն Էջմիածնի և Ս. Սարգսի» տպարանում կատարված աննախադեպ հրատարակչական աշխատանքը: Մատթեոս Ծարեցին, Ավետիս Դլիճեցին, Կարապետ Անդրիանացին, Ոսկան Երևանցին, Պետրոս Ջուղայեցին միասնական ջանքերով Հայոց եկեղեցու կարիքների համար, բացի Աստվածաշնչից, տպագրում են նաև մի շարք այլ հատորներ¹⁰: Այնուամենայնիվ, Ամստերդամում հիմնված այս տպարանի գլուխգործոցը մնում է հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը:

Հռոմի Ուրբանյան տպարանում լույս տեսնող հայերեն գրքերի հրատարակությունը կարծես ժամանակավորապես դադարում է, երբ Ամստերդամում աշխատում էր «Ս. Աթոռ Էջմիածնա և Ս. Սարգսի» տպարանը, թեպետ այդ տպարանի աշխատանքները դադարեցնելու դիմումներով հեղեղվում է Համասփյուռի գրասենյակը¹¹: Հետաքրքիր է, որ Ամստերդամի տպարանի գրեթե իննամյա (1661-1669 թթ.) բուռն գործունեության ընթացքում ուրիշ որևէ վայրում հայերեն գիրք կարծես չի հրատարակվում: Հետագայում այս տպարանի գործունեությունը շարունակվում է Լիվոռնոյում և Մարսելում Սողոմոն Լևոնյանի հետ համատեղ: Հայոց տպագրական գործի պատմության համար հետաքրքիր է նաև այն փաստը, որ Ոսկանի տպած Աստվածաշնչի

⁹ Տե՛ս Քոլանջյան Ս., Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և Ոսկանյան հրատարակությունը, Էջմիածին, 1966, ԺԱ-ԺԲ, էջ 116-126:

¹⁰ Իշխանյան Ռ., Հայ գրքի պատմություն, հտ. 1, Երևան, 1977, էջ 405-471:

¹¹ Նոյն տեղում, էջ 475-480:

բնագիրը դեռևս չուրջ երկու դար շարունակ վերահրատարակվում էր աշխարհի տարբեր ծագերում Մայր Աթոռի հովանու ներքո հաստատված տպարանների կողմից¹², լրացնելով հայոց եկեղեցիներում Աստվածաշնչի բնագրի պակասը (Կ. Պոլիս, 1705 թ., Վենետիկ, 1733 թ., Ս.Պետերբուրգ, 1817 թ., Սիրամփուր, 1817 թ.):

ԺՁ - ԺԸ դարի քաղաքական անկայուն վիճակը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տնտեսական հնարավորությունները հնարավորություն չէին տալիս Ամենայն Հայոց կաթողիկոսներին հրատարակչական գործը և գրքերի տպագրությունը համատեղելու Վաղարշապատում: Դրան խանգարում էին նաև գրքերի հրատարակության բնագավառում պարսկական իշխանությունների դրած արգելքները: Ուստի կաթողիկոսները, Հայոց եկեղեցու հոգսերը հոգալու համար, ստիպված էին տպարաններ պահել և հովանավորել Ամստերդամում, Մարսելում, Վենետիկում, Լիվոռնոյում, Կ.Պոլսում, Ջնյուռնիայում, Աստրախանում և այլ քաղաքներում: Հատկանշական է, որ հիշատակված քաղաքների տպարաններից շատերը կրում էին «Սուրբ Էջմիածնի» անունը, և գրքերը հրատարակվում էին Ամենայն Հայոց կաթողիկոսների անունից: Ամենայն Հայոց կաթողիկոսարանի հովանու ներքո Վաղարշապատում տպարան հիմնելու միտքն իրականություն դարձրեց միայն Սիմեոն Ա Երևանցի (1763-1780 թթ.) կաթողիկոսը: Սկսած 1765 թ., նա Ջնյուռնիա ուղարկված նվիրակ Ղուկաս Կարնեցու միջոցով Վաղարշապատ է հրավիրում Ջնյուռնիայի տպագրիչ Մարկոսին և հրահանգում Ամստերդամում հաստատված Հովհաննես վարդապետին և խոջա Առաքելին տառեր, տպագրական գործիքներ և պարագաներ ուղարկել Վաղարշապատ¹³: Եռանդուն նախապատրաստությունից հետո՝ 1771 թ., Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է Հնդկաստանում բնակվող ջուղայեցի Գրիգոր Խոջաջանյանի նվիրատվությամբ տպարան հիմնել իր բոլոր պարագաներով: Այդ նույն ժամանակ է վրաց

¹² Անասեան Հ., Էջմիածնի տպարանի Սուրբգրային հրատարակությունները և Ս. Գրքի քննական հրատարակության հարցեր: Նույնի՝ Մանր երկեր, էջ 42:

¹³ Ա. եպս. Սմբատյանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը/ հրատ. պատրաստումը, ներածությունը, ծանոթագրությունները և հավելվածը՝ Ս. Քուլանջյանի և Արթուն Հատիտյանի, Էջմիածին, 1973, էջ 43, 44:

Հերակլ Բ արքան տպարան է հիմնում Թիֆլիսում՝ օգտագործելով կաթողիկոսի կապերը Կոստանդնուպոլսի հայ տպագրիչների հետ¹⁴: Միաժամանակ Սիմեոն Վեհափառ Հայրապետը քայլեր է ձեռնարկում՝ Վաղարշապատում թղթի գործարան հիմնելու համար: Որքան էլ Սիմեոն կաթողիկոսի կողմից արժևորվում էր Աստվածաշնչի հրատարակությունը, նա լավ գիտակցում էր, որ այդ բնագրի նոր հրատարակությունը պահանջում էր լավ կրթություն ստացած կարող ուժերի համախմբում:

Այս շրջանում հայագիտությամբ զբաղվող ուժերի կենտրոնացում էր տեղի ունեցել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում, որն էլ Մխիթար Սեբաստացուց սկսած՝ քայլեր ձեռնարկեց Աստվածաշնչի դասական թարգմանության բնագրի վերականգնման բնագավառում: Արդեն իսկ 1733 թ. հրատարակած Ոսկան Երևանցու կազմած բնագրի վենետիկյան հրատարակության մեջ Մխիթար աբբահայրը քննական որոշ վերաբերմունք ցուցաբերեց, հիմնվելով իրեն հասու ձեռագրերի վրա՝ սրբագրեց Ոսկանի որոշ շեղումներ՝ էլ ավելի շատ բնագրական դիտողություններ կատարելով իր հրատարակության լուսանցքներում: Այդ դիտողությունները հիմնականում ներկայացնում էին 1645 թ. Փարիզում հրատարակված յոթնվեզվյան Աստվածաշնչի հետ կատարված համեմատության արդյունքները: Մխիթար Սեբաստացու քննական վերաբերմունքը Աստվածաշնչի բնագրին և նրա տարբեր ձեռագրերի օգտագործման խնդրում հետագայում արտացոլվեց Մխիթարյանների սուրբգրային բնագրերի հետագա հրատարակություններում¹⁵: 1805 թ. Մխիթարյանները հ. Հովհաննես Զոհրաբյանի ղեկավարությամբ հրապարակեցին հայկական Աստվածաշնչի դասական բնագիրը, որը հիմնված էր շուրջ 7 հինկտակարանային և 20 նորկտակարանային ձեռագրերի վրա: Զոհրաբյանի Աստվածաշունչը պետք է համարել հայկական դասական բնագրի առաջին գիտական հրատարակությունը, իսկ Արսեն Բագրատունու կողմից 1860 թ. լույս ընծայված բնագիրը՝ նախորդ (1805 թ.) հրա-

¹⁴ Տե՛ս Զոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 125:

¹⁵ Անայան Հ., Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, Էջմիածին, 1966, ԺԱ-ԺԲ, էջ 92:

տարակույթյան բարելավված տարբերակը, որտեղ հեղինակը, հիմնվելով ձեռագրական ընթերցումների և հունարեն քննական բնագրի վրա, բազմաթիվ նոր սրբագրություններ է կատարել¹⁶: Արսեն Բագրատունու հրատարակության հիմնական նպատակը Աստվածաշնչի թարգմանական բնագրի գիտական հղկումն էր Ե դարի դասական հայերենի օրենքների հետևողությամբ:

Չոհրաբյանի և Բագրատունու հրատարակություններից հետո նոր էջ է բացվում հայկական Աստվածաշնչի ուսումնասիրության ապարեզում, որի գիտակցությամբ էլ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին հանդես եկավ նոր նախաձեռնությամբ: Պետք է միայն հիշատակել, որ 1787 թ. ի վեր մինչև Ի դարի սկիզբը Էջմիածնի տպարանում չորս անգամ հրատարակվել է Դավթի Սաղմոսաց Գիրքը և հինգ անգամ Ավետարանների բնագիրը, չհաշված Ավետարանների մասնակի հրատարակությունները, ինչպես օրինակ՝ Իվաբերից Ավետարանը: Ամբողջական, Հայոց եկեղեցու իշխանությունների կողմից վերահսկված Աստվածաշնչի բնագիր հրատարակելու հարցը Էջմիածնում օրակարգի խնդիր է դառնում Մակար Ա կաթողիկոսի (1885-1891 թթ.) օրոք, երբ ծրագրի իրագործումը հանձնարարվում է 1887-1888 թթ. Գևորգյան ճեմարանի դասախոս Մաղաքիա եպս. Օրմանյանին¹⁷: Թեպետ 1889 թ. հոկտեմբերին ավարտվում է տպարանի նոր շենքի կառուցումը, սակայն, ավա՛ղ Մ. Օրմանյանն այլևս չէր պաշտոնավարում Մայր Աթոռում, ինչպես որ կիսատ են մնում բազմաթիվ մտահղացումներ, որոնք կապված էին Գևորգյան ճեմարանի գործունեության հետ:

Երիմյան Հայրիկի կաթողիկոսության (1892-1907 թթ.) շրջանում Աստվածաշնչի նոր բնագրի հրատարակության հարցը դառնում է Մայր Աթոռի գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը, քանի որ Աստվածաշնչյան ամերիկյան ընկերության կողմից 1895 թ. Կ. Պոլսում լույս ընծայված բնագրում հաշվի չէր առնվել Հայոց եկեղեցու կանոնը, և բնագիր չէին մտել երկրորդականոն՝ Եզրի Ա, Յուդիթ,

¹⁶ Տեր-Մկրտչյան Կ., Աստվածաշունչի նոր հրատարակությունը, «Արարատ», 1902, էջ 1076, 1077:

¹⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, մասն Գ, 2945:

Տոմբիթ, Մակաբայեցոց Ա-Գ գրքերը, Իմաստութիւն Սողոմոնի, Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Թուղթ Բարուքայ կտորները: Այս տպագրությունից հետո Աստվածաշնչի ամբողջական բնագրի գիտական հրատարակությունը և հայերեն ընկալյալ բնագրի վերականգնումը կարևոր նպատակ դարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գործունեության մեջ: Խրիմյան Հայրիկը նոր շունչ է տալիս հրատարակչական գործունեությանը և Կարապետ Եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի ղեկավարությամբ Աստվածաշնչի գիտական բնագիրը հրատարակելու համար հանձնաժողով է ստեղծում¹⁸: Այս է պատճառը, որ 1896 թ. հունվարի 19-ի թ. 85 և հունվարի 26-ի թ. 131 կոնդակներով պատվեր է տալիս տպարանին՝ լծվելու Աստվածաշնչի բնագրի հրատարակմանը: 1902 թվականին Կ. Տեր-Մկրտչյանը հանդես է գալիս հոդվածով՝ հստակեցնելով Աստվածաշնչի բնագիր կազմելու և հրատարակության հիմնական սկզբունքները: Մայր Աթոռի ձեռագրական հավաքածոյից առանձնացվում է ութ ձեռագիր, որոնք վերլուծական նկարագրության են ենթարկվում: Ծրագրված հրատարակության փորձնական պրակը տարընթերցումներով հանդերձ 1903 թ. սկզբներին փորձաքննության համար ուղարկվում է մի շարք մասնագետների ու մտավորականների: Ցայժմ հայտնի է երեք արձագանք, որոնցից երկուսը հրապարակվել են ժամանակակից մամուլում¹⁹:

Ի դարակցի իրադարձությունները, ճակատագրական Առաջին համաշխարհային պատերազմը, Հայոց ցեղասպանությունը ու նրա հետևանքները, դրանց հաջորդած Հոկտեմբերյան հեղափոխությունը շուրջ 50 տարով մոռացության մատնեցին Աստվածաշնչի հրատարակության հետ կապված ծրագրերը: Նույնիսկ հայտնի չէ, թե Կարապետ Տեր-Մկրտչյանի կատարած աշխատանքի անտիպ նյութերը որտեղ են գտնվում այսօր:

Աստվածաշնչի բնագրի ընկալմանը մեզանում նոր լիցք հաղորդեցին Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակության 300-ամյակին նվիրված մտածումները, որոնք լայն արձագանք ստացան Մեծի Տանն

¹⁸ Տե՛ս Անասյան Հ., Էջմիածնի տպարանի Սուրբգրային հրատարակությունները և Ա.Գրքի քննական հրատարակության հարցեր հոդվածը: Նույնի՝ Մանր երկեր, էջ 41-59:

¹⁹ Անասյան Յ., Մանր երկեր, էջ 50:

Կիլիկիո և Կոստանդնուպոլսի աթոռներում: 1966 թ. Մայր Աթոռի պաշտոնական պարբերական «Էջմիածին»-ը լույս ընծայեց բացառիկ մի համար, որի հրապարակմանը մասնակցեցին Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակության պատմությանն առնչված ժամանակի հիմնական մասնագետները, նրանց ոգևորողը Տ.Տ. Վազգեն Ա Վեհափառն էր: Ոսկանյան Աստվածաշնչի տարելիցը նոր լիցք հաղորդեց էջմիածնի շուրջ համախմբված հայագիտական շրջաններին: 1969 թ. էջմիածնում հրապարակվեց Ավետարանի արևելյան աշխարհաբար թարգմանությունը: Մի շարք հայագետներ Աստվածաշնչի գրաբար բնագիրն արևելահայերեն թարգմանելու համար պայմանավորվածություններ ձեռք բերեցին Մայր Աթոռի հետ: Այս շրջանակների համար Մայր Աթոռը արտասահմանում ձեռք բերեց հունարեն, լատիներեն, եբրայերեն և ասորերեն Աստվածաշնչերի նորագույն հրատարակությունները: Երկարատև խմբագրական աշխատանքներից հետո՝ 1996 թ., հրապարակվեց Աստվածաշնչի արևելյան-աշխարհաբար թարգմանությունը: 80-ական թթ. Մայր Աթոռը մի շարք հայագետների հետ պայմանագրեր ստորագրեց Ս. Գրքի տարբեր գրքերի գիտական բնագրերի ստեղծման համար: Ցայսօր հրատարակվել են Անդրանիկ Զեյթունյանցի կազմած «Ծննդոց Գիրք»-ը (1985 թ.), «Ելից Գիրքը» (1992 թ.), «Ղևտացուց Գիրքը» (1993 թ.), «Թվոց Գիրքը» (1993 թ.), Հայկ Ամալյանի կազմած «Գիրք Մակարայեցուց»-ը (1996 թ.), Կլոդ Կոքսի հրատարակած «Երկրորդ Օրինաց»-ը (1981 թ.) և Պիտեր Կաուի կողմից պատրաստված «Դանիելի գիրքը» (1992 թ.): Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը մանրամասնորեն անդրադառնում է Վազգեն Վեհափառի կաթողիկոսության շրջանում Աստվածաշնչի հրատարակման գործում Մայր Աթոռի նախաձեռնություններին²⁰: Նրա հովանավորությամբ լույս տեսավ Աստվածաշնչի հայկական ձեռագրերի նկարագրությունը: Երջանկահիշատակ Սրբազանն էլ իր լուսան է ներդնում՝ հովանավորելով Աստվածաշնչի նոր բնագրի հրատարակությունը, որի հիմքում, ըստ նրա, դրված պետք է լիներ 1269 թ. գրված, Երուսաղեմում պահվող Երզնկայի Աստվածաշունչը: 2012 թ. Աստվա-

²⁰ Ցուցակ Աստուածաշունչ մատենի հայերէն ձեռագիրներուն, Լիզպոն, 1992, էջ L և հտև:

ծաշնչային ընկերությունը հրապարակեց իր իսկ հրատարակած Ս. Գրքի համաբարբառը՝ հիմնվելով 1996 թ. հրատարակած բնագրի վրա, միաժամանակ օգտագործելով հաշվողական տեխնիկայի հնարավորությունները:

Վերջին տարիներին Մայր Աթոռում հրապարակվում են նաև Ս. Գրքի մեկնողական երկերը: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակության և «Մատենագիրք Հայոց մատենաշարերում» վերջին 10 տարում հրապարակվել են երկու տասնյակի հասնող մեկնողական երկեր: Դրանք հնարավորություն են տալիս ուղղակիորեն առնչվելու աստվածաշնչային այդ բնագրերի ոչ միայն միջնադարյան մեկնությունների հետ, այլ նաև վերահսկելու մեզ հասած սուրբգրային բնագրերի վիճակը: Մի խոսքով, Աստվածաշնչի տարբեր գրքերի գիտական բնագրերի պատրաստումը մեզանում դեռևս ընթացող գործընթաց է, այս բնագավառում նոր հետազոտությունների կարիք է զգացվում:

Ամփոփելով վերևում ասվածը՝ կարելի է կատարել հետևյալ ընդհանրացումները.

ա/ Հայոց եկեղեցին ի սկզբանե մեծ հետաքրքրություն է ցուցաբերել Աստվածաշնչի հրատարակության գործի նկատմամբ: Սակայն քաղաքական պայմանները մինչև ԺԸ դարի 70-ական թթ. թույլ չեն տվել տպագրական գործի զարգացումը ո՛չ Արևելյան, ո՛չ էլ Արևմտյան Հայաստանի տարածքում: Այդ իսկ պատճառով Հայոց կաթողիկոսներն ամեն գնով փորձել են սատարել տպագրական գործին արտասահմանում: Այս շրջանում հայկական տպագրության զարգացման գործում նոր երևույթ դարձավ Ամստերդամում ստեղծված «Ս. Էջմիածին և Ս. Սարգիս» տպարանի գործունեությունը: Այս տպարանի աշխատանքի և Մայր Աթոռի նախկին դիվանապետ Ոսկան Երևանցի վարդապետի ջանքերի շնորհիվ լույս աշխարհ եկավ առաջին հայերեն Աստվածաշունչը:

բ/ ԺԸ-ԺԹ դդ. քաղաքական հանգամանքները թույլ չտվեցին Մայր Աթոռին ուժեր կենտրոնացնել Աստվածաշնչի բնագրի քննության և բնագրի պատրաստման խնդրի վրա: Կարծես թե Էջմիածնի կաթողիկոսարանը Մխիթարյաններին էր զիջել այդ բնագավառում հետազոտություններ կատարելու առաջնությունը:

գ/ ԺԹ դ. վերջի և Ի դարի սկզբի կաթողիկոսներ Մակար Թե-

ղուտեցին և Խրիմյան Հայրիկը կրկին Վաղարշապատի միաբանության ուշադրությունը սևեռում են Աստվածաշնչային բնագրերի վերահրատարակության վրա: Գործի գլուխ է կանգնում Կարապետ Տեր-Մկրտչյանը: Ցավոք, կատարված աշխատանքն ընդհատվում է, քանի որ կողմերին պարզ չէր, թե Աստվածաշնչի բնագիրն ինչպես պիտի հրամցվեր ընթերցողին: Եթե Կարապետ Տեր-Մկրտչյանն իր առջև նպատակ էր դրել վերականգնելու ընկալյալ բնագրի դասական վիճակը, ապա հոգևոր դասի գերակշռող մասը պահանջում էր կարճ ժամանակում հրապարակել եկեղեցու ծեսի կարիքները բավարարող Աստվածաշունչ: Եկեղեցու հավատացյալների և սպասավորների մի մասն էլ ակնկալում էր ունենալ ժողովրդին հասկանալի լեզվով թարգմանված Ս. Գիրք: Կարծում եմ՝ այս հակամետ նպատակներն են եղել գործի ընդհատման պատճառը: Պիտի ափսոսել, որ ցայսօր հայտնի չէ Կ. Տեր-Մկրտչյանի ղեկավարությամբ կատարված աշխատանքի թողունների պահպանման տեղը:

դ/ Աստվածաշնչի բնագրի հրատարակությունը խթանելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակման 300-ամյա տարելիցի ոգեկոչումը Վազգեն Ա Վեհափառի կողմից: Գործին լծվեց հայագետների մի բավական համախումբ փաղանգ, որոնց ջանքերի շնորհիվ 1996 թ. արևելահայերեն թարգմանվեց Աստվածաշունչը: Վերջին տասնամյակների ամենակարևոր ձեռքբերումը դարձավ Աստվածաշնչի շուրջ մեկ տասնյակ գրքերի գիտական բնագրերի հրատարակությունը: Այսօր էլ Ս. Գրքի գիտական բնագրի պատրաստումը մնում է մերօրյա հայագիտության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առջև կանգնած կարևորագույն խնդիրներից մեկը:

BOZOYAN AZAT

THE SCRIPTURE IN THE PUBLISHING PLANS OF THE MOTHER SEE HOLY ETCHMIADZIN

The Armenian Church from the beginning had a great interest in publishing the Holy Bible. However the political conditions until 70-ties of

XVIII century didnt allow to develop the publishing business neither in Western, nor in Eastern Armenia. Exactly because of this reason the Armenian catholicoses tried at any cost to support the publishing business abroad. In this period the activity of printer's "Holy Etchmiadzin and st.Sargis", which was established in Amsterdam, became a new phenomenon in the Armenian book-printing. By virtue of work of this printing-house and the efforts of former chancellor of the Mother See Voskan Yerevantsi the first Armenian Bible came into being.

In the XVIII-XIX centuries the political conditions didnt allow the Mother See to focus on the research and preparation of the text of the Bible. It seems that Mother See Holy Etchmiadzin yielded to Mekhitarists the primacy of research in this field.

The catholicoses Macar Teghutetsi and Khrimean Hairik, lived in the late 19th - early 20th century, focused attention of the congregation of Vagharshapat on the republication of the biblical texts. Unfortunately the work was interrupted. As it was unclear how to present the text of the Bible to the reader. If Karapet Ter-Mkrtchean set a goal to restore the classical condition of the text, the greater part of the spiritual estate required in a short time to publish a Bible that satisfies the religious needs of the Church. Another part of the believers and Church ministers hoped to have a Bible translated into a language understandable to the people. I suppose that these opposite goals also contributed to the termination of the work. One should regret that to this day it is not known where are kept the results of the work done under the leadership of K. Ter-Mkrtchean.

From the standpoint of stimulating the publication of the Bible important was the celebration of the 300th anniversary of publication of the Bible of Voskan, which was initiated by catholicos Vazgen I. The rather serried phalanx of armenologists got down to work, and thanks to their efforts in 1996 the Bible was translated into the Eastern Armenian language. The most important achievement of the last decades was the publication of dozens of scientific biblical texts. Today the preparation of the scientific text of the Bible remains one of the most important tasks facing modern Armenology and the Mother See Holy Etchmiadzin.